

## ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՈՐՊԷՍ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԺԹ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍ)

Կարինի առեւտրական խոշոր կենտրոն լինելու փաստը հաշուի առնելով՝ դեռեւս ժԸ. դարի վերջերին քաղաքում հիմնուում է Անգլիական առեւտրական տունը, որ ժԹ. դարում հայ առեւտրականների Մանչեստրի ընկերութեան հետ հաստատել էր փոխշահակէտ կապեր: Լինչը հաւաստում է, որ դեռեւս 1690ին քաղաքում բեղուն գործունէութիւն էին ծաւալել Անգլիայի առեւտրականները<sup>1</sup>: Նահանգի առեւտրական գործարքներից մէկը, որ խոշոր եկամուտ էր բերում, ոչխարի առեւտուրն էր. «Ոչխարի վաճառականութիւնը այնչափ նշանաւոր է, որ տարեկան հասնում է 1 200 000 տանկական ոսկու (մօտ 20 մլն մարկ) եւ այդ գումարի մեծ մասը մնում է էրզրումի հայերի ձեռքը», - գրում էր Էդ. Նաումանը<sup>2</sup>:

Գ. Արծրունին խօսելով Կարինի առեւտրաշատ գործունէութեան մասին, գրում էր. «Կոստանդնուպոլսից եկող ապրանքը պատահում էր Պարսկաստան անցնող անմշակ եւ հում քերփերի հետ: Այնտեղ քափուում էին, նոյնպէս ամէն կողմերից, Հայաստանի թէրմական քերփեր եւ թէ հայ ազգաբնակչութեան ձեռքերի վաստակը, աշխատասէր հայի եւ հայուհու արդիւնագործութիւնը: Այսպիսով թէրմիկ եւ թէ օտարական առեւտրականները, նոյնպէս եւ պարսիկ, յոյն, երբեմն էլ եւրոպացի վաճառականներ, հաւաքուելով էրզրումի մէջ, տալիս էին այս քաղաքին կեանք եւ առեւտրական նշանակութիւն»<sup>3</sup>:

Կարինի վաճառականներն արտահանում էին ցորեն, գարի, պղնձեայ իրեր, արծաթեայ զարդեր, իւղ, պանիր, բուրդ, ոչխար,

1 Լինչ, Հ.Ֆ.Պ., Հայաստան, հտ. Բ., Կ.Պոլիս 1914, 234:

2 ՆԱՌԻՄԱՆ, Էդ., էրզրում, Թիֆլիս 1896, 30:

3 ԱՐԾՐՈՒՆԻ, Գ., Թուրքահայաստանի տնտեսական դրութիւնը, Թիֆլիս 1894, 6:

խոշոր եղջերաւոր անասուններ, արհեստագործական իրեր, մորթիներ, մեղր, մեղրամոմ, ճրագու, կապար:

Նրանք ներմուծում էին շաքար, սուրճ, լեղակ, որդան կարմիր, հինայ, երկաթեղէն, պողպատ, գոմէշի մորթի, թուղթ, հայելի, սրիչ, մկրատ, ֆէս, կտորեղէն, մահուդ, շալ, մուշտակ, բամբակ:

Հ. էփրիկեանի տուեալներով՝ Կարինի վաճառականները տարեկան վաճառել են 30 մլն դահեկան կամ 6 875 000 Ֆրանկի արժողութեան ապրանք, որից Ռուսաստանում իրացուել է 850 000, Գերմանիայում՝ 1 500 000, Անգլիայում՝ 800 000, Աւստրիայում՝ 300 000, Թուրքիայում՝ 3 275 000 Ֆրանկի ապրանքներ:

Ներմուծել են 60 մլն դահեկանի (1 395 000 Ֆրանկ) ապրանք Անգլիայից՝ 2 400 000, Աւստրիայից՝ 1 800 000, իսկ Գերմանիայից՝ 2 100 000, Պարսկաստանից՝ 17 000 000, Ռուսաստանից՝ 1 600 000, Շուեյցարիայից՝ 400 000, Թուրքիայից՝ 2 500 000 եւ տարբեր վայրերից ու երկրներից՝ 1 095 000 Ֆրանկի ապրանքներ<sup>4</sup>:

Յենուելով հայ առեւտրականների վրայ՝ Ռուսաստանը ճրգտում է գերակշիռ դիրքի հասնել թուրքական առեւտրում: Այդ նպատակով, հաշուի առնելով վառելանիւթի մեծ պահանջարկը, ռուսական նաւթային «Լոյս» ընկերութիւնը Կարինում հիմնել էր վառելանիւթի պահեստ, իր ձեռքում կենտրոնացնելով ինչպէս նահանգի, այնպէս էլ հարեւան շրջանների վառելանիւթի առեւտուրը:

Լ. Չորմիսեանը յայտնում է, որ քաղաքում գործել են կերպասեղէնի 20, ապակեգործների տասնեակ կրպակներ, հինգ կաշուի, չորս մետաքսի, երկու մետաղագործի, քարիւղի, կոշկեղէնի, շաքարի, բրդեայ ծածկոցների, գորգագործների եւ այլ արհեստանոցներ ու կրպակներ, հացահատիկի առեւտրով զբաղուող հայ վաճառականների երեք տներ՝ իրենց պահեստներով: Յատկանշական է, որ գորգերի առեւտուրն ամբողջովին եւ եօթ դեղատները<sup>5</sup> գտնուում էին հայ վաճառականների ձեռքում: Յիշատակութեան է արժանի այն փաստը, որ մետաքսաթելի ստացման գործն ու մետաքսագործութիւնը Թուրքիայում նախաձեռնել եւ

4 ԷփրիկեԱն, Ս., Պատկերագարդ քննաշարհիկ քառարամ, հտ. Բ., Վեճտիկ 1806, 305:

5 ԶՐՄԻՍԵԱՆ, Լ., Համայնապատկեր արեւմտահայ մէկդարու պատմութեամ, Պէյրուք 1972, 174:

սկսել են հայերը: Նրանց ջանքերով Բուրսայում հիմնուում է Թուրքիայի առաջին շերամարտածական կայանը:

Կարինցի առեւտրականների շարքում իրենց ուրոյն տեղն ունէին Բաստուրմաճեան եղբայրները: Նրանք իրենց ձեռքում էին պահում բանակը մտով մատակարարելու մենաշնորհը: «Голос» թերթի յօդուածը, որ արտատպուել է «Մշակում», յայտնում է, որ հայ եղբայրների մատակարարած միսը, շնորհիւ յատուկ վերամշակման, կարելի է պահել եւ օգտագործել երկար ժամանակ<sup>6</sup>:

1863ի տուեալներով մէկ տարում Կարին է ներմուծուել 577 000, արտահանուել՝ 14 000 ուուբլու պարանք<sup>7</sup>: Դարի երկրորդ կէսին առանձնապէս աշխոյժ առեւտրական գործունէութիւն էին ծաւալել քաղաքի՝ հացահատիկի առեւտրով զբաղուող հայ վաճառականները: Նահանգում 1886-1890 արտադրուել է 28 997 000 չինիկ կամ 12 մլն փութ հացահատիկ՝ դարի, ցորեն<sup>8</sup>, որի մեծ մասը հայ առեւտրականների միջոցով վաճառքի էր հանուում Թուրքիայի տարբեր շրջաններ: Միայն Դերջանի գաւառը 1884ին Տէրսիմ էր արտահանել 16 000 փութ (1000 սոմար) հացահատիկ<sup>9</sup>:

Ղ. Չարըզի վկայութեամբ քաղաքի կարեւորագոյն առեւտրավաճառականական կենտրոններից էին խալոլու, Կամպուսի, Տէրուիչ, Թիւթիւնի, Գենչ, Հաճի, Բաց, Բրնձի, Ժամի, Փաստըրմաճոնց (կամ Բաստուրմաճեանների - Հ.Զ.) եւ այլ առեւտրական տները: Թէեւ, նշում է հեղինակը, կային նաեւ մահմեդականներին պատկանող առեւտրական տներ, բայց նրանցից ամենավաճառաշատէրը «Հայ վաճառականներու ձեռքն էր»<sup>10</sup>:

Ոչ միայն Կարինի, այլեւ Թուրքիայի նշանաւոր առեւտրականներից էին Գրիգոր, Կարապետ, Մարգիս Պալարեանները, Նշկեան, Ասատրեան, Ֆնդալեան, Իւսուֆյան, Տուզեան եղբայրները, Հաճի Մանուկը, Աբէլ Կյուլպենկեանը եւ շատ ուրիշներ, ո-

6 Մշակ, 1880, թիւ 170:

7 Оттоманская империя, СПб. 1869, 265.

8 ЛАВРИОНОВИЧ, Ю., Экономическое положение Турции, см. Турецкий сборник, СПб 1909, 144.

9 КОЛЮБИКИН, А., Материалы для описания Персии, Азиатской Турции и Закавказского края, Тифлис 1888, т. 3, ч. 1, итд. 2, 422.

10 ԶԱՐԸԳ, Ղ., Յուշամատեան Բարձր Հայքի, Կարիմապատում, Պէյրուք 1987, 107-108:

րոնք իրենց կարողութեամբ ի վիճակի էին մրցել եւրոպացի առեւտրականների հետ: Յիշատակուած առեւտրականների ձեռքում էր Կարինի առեւտրի 90 տոկոսը<sup>11</sup>:

Աւելին, մէկ ուրիշ աղբիւրի վկայութեամբ, Թուրքիայի արտահանման 40, ներմուծման 60 եւ ներքին առեւտրի 80 տոկոսը գտնուում էր հայերի ձեռքում<sup>12</sup>:

Ընդհանուր առմամբ Թուրքիայի առեւտրական 10 նշանաւոր կենտրոններում 1895ին գործում էին 71 հայ խոշոր առեւտրականներ: Թուրքիայի հայ վաճառականութեան տարեգրութիւնը հարուստ է բազմաթիւ նշանակալի փաստերով, որտեղ իր համեստ բաժինն ունի Կարինի հայ վաճառականութիւնը: Այսպէս օրինակ, կարինցի մի վաճառական 1815-1825՝ տասը տարում, իր մենաշնորհը դարձնելով Եթովպիայի հետ զանազան ապրանքների առեւտուրը, կուտակում է 250 000 ոսկեդրամ<sup>13</sup>:

Առեւտրի զարգացումը խոչընդոտում էր նաեւ կառավարութեան հայահալած քաղաքականութիւնը: Եթէ մինչեւ 1870 հայ առեւտրականները համարեայ անարգել էին գործում, ապա յատկապէս 1877-1878 պատերազմից յետոյ այդ հնարաւորութիւնները վերացան: Կաշկանդիչ մեծ ազդեցութիւն էր թողնում մաքսային քաղաքականութիւնը, եւ քանի որ այն գտնուում էր անորոշութեան մէջ, տեղական իշխանութիւնները սահմանում էին իրենց շահաւէտ մաքսային համակարգեր: Յատկապէս անորոշ էր շաքարի մաքսը, չնայած շաքարն ամենագործածական սննդամթերքն էր, բայց ելնելով պահանջարկից, տարուայ ցանկացած եղանակի բարձրացում էր նրա մաքսաչափը:

Մաքսային թալանի պատկերաւոր նկարագրութիւնը տալիս է Ղ. Ինճիճեանը. «Արդ՝ ա՛յս է կարգ եւ օրէնք մաքսին ի յերգիռում յաւուրս սուլթան Համիտի: Ամէն վաճառք եկեալք ի սահմանաց օսմանեան տէրութեանէ, վճարեն 4 առ 100. եւ ամէն վաճառք եկեալք ի սահմանաց պարսից, վճարեն 11 առ 100: Բայց ի մաքսէն պարտ է տալ տասնորդս, գոր կոչեն Փազլայ, արանց կամ սպասաւորաց մաքսատան: Ի հանելն զվաճառս ինչ յերգիռումայ առ ի տանել յայլ սահմանս օսմանեան տէրութեան, առ մի մի բեռն՝ պարտ է տալ 2 դուրուշ. 8 փարայ: Ի մուծանելն զվաճառ ինչ յերգիռում, թէ պարսից իցէ, եւ թէ օսման

11 ՉՈՐՄԻՍԵԱՆ, Լ., նշ. աշխ., 174:

12 Ա.Ադ.:

13 Ա.Ադ., 15:

նեանց, թե սակաւ իցէ, եւ թէ բազում, պարտ է տալ 22 փարայ ի հտի-սասպ աննէսի: (Այս ի հտիսասպ որ է մալիքեանէ վնառի 600 դուրուշ): Վաճառք եկեալք յօսմանեան սահմանաց, որք մտանեն ի յերգիռում միայն առ ի անցանել տար այն, եւ ոչ ի վաճառիլ անդէն. ուստի եւ ոչ հարկ լինի բանալ գնոյն, եղեալ ի վերայ նշան՝ որ կոչի Կեչէր Կեօմիքիւյի, տայ վասն այսոր զկէսն նոյնչափ մաքսին, որչափ ինչ ունէր տալ, թէ վաճառեալ լինէր ի յերգիռում: Վաճառք եկեալք յօսմանեան սահմանաց՝ որք մտանեն ի յերգիռում՝ ի վաճառիլ անդ, եւ ի ոչ վաճառիլն՝ ունին գնալ ի սահմանս պարսից, վնարեն 11 առ 100. այս՝ որչափ ինչ տայ վաճառն եկեալ ի սահմանաց պարսից: Վաճառ փախուցեալ յայսպիսի տրոց, ըստ իմանալն՝ տայ ի տուգանս այնչափ ինչ, որչափ ինչ ունէր տալ ի վնարելն զմաքս. յորմէ մի մասն առնուն սառափն, քէաթիպն, եւ արաերնի պաշին, որ է տիտապան, իսկ զմնացեալ մասն առնու մատնիչն. այս ի 10 դուրուշէն, զերիսն առնուն վերոգրեալ երեք անձիւնք, իսկ զմնացեալ էօթն դուրուշ առնու մատնիչն»<sup>14</sup>:

*Թուրքիայում գործում էին առեւտրական ու մաքսային տարբեր օրէնքներ: Մի նահանգում օգտագործուող մաքսային համակարգն անգործածական էր միւսում: Երզնկայի կանոնը սահմանում էր մաքսային բոլորովին այլ քաղաքականութիւն, Կարինի կանոնը՝ ուրիշ: Այստեղ վճուական դերը պատկանում էր տեղում գործածական առարկաներին ու նրանց պահանջարկին: Երզնկայի կանոնն արձանագրում էր. «Տրապիզոնից քերուած վուշի գործուած-բեղէնը, եթէ քաղաքում վաճառուի (վաճառողը) ինչ ազգից էլ որ լինի, իւրաքանչիւր թօփից տասը սեւ ակչէ պիտի վնարի: Տրապիզոնից քերուած վուշի հագուստներից հարիւր յիսուն սեւ ակչէ են վերցնում: Ռումից քերուած պղինձը, շաքարը, գորգը, կաշուեղէնը, Բուլգարեն՝ դանակը եւ այլ մանր ապրանքները, եթէ Երզնկայում վաճառուեն, հարիւրից հինգը թամդու են վերցնում: Շաքարի քեռից հինգ հարիւր սեւ ակչէ են վերցնում, իսկ գորգի, սփի (կերպասեղէն) քեռից՝ եւս երեք հարիւր սեւ ակչէ: Կաշուի քեռից չորս հարիւր ակչէ են վերցնում, Բուլգարիի քեռից՝ երկու հարիւր, իսկ դանակի քեռից՝ երեք հարիւր, պղնձի քեռից՝ հարիւր իննսունութ, որից իննսուն ակչէ որպէս մեծ բակ, ութսունչորս ակչէ Սեւ Թամդայի եւ տասնութ սեւ ակչեն Թերջանի վարթիկ քերդի բաջն է: Միւրդենկի (murdesenk) եկող քեռից վաթ-*

14 ԻնձիճնԱն, հ. Ղ., *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի*, հտ. Ա., Վենետիկ 1806, 71-72:

սուն սեւ ակչէ են վերցնում: Եթէ երգնկացիները մետաֆս բերեն, բաբմանից յիսուն սեւ ակչէ են վերցնում, իսկ եթէ Ռումի կերպաս բերեն, քսանհինգ ակչէ: Վերոյիշեալ կերպասներից եւ բրնձից, օճառից, հինայից (nina) եւ նման ապրանքներից, եթէ քաղաքում վաճառուեն, հարիւր սեւ ակչէից հինգ սեւ ակչէ են վերցնում: Եթէ ձիաշուկայում ձի վաճառուի, գնողից տասնութ ակչէ եւ վաճառողից տասներկու սեւ ակչէ են գանձում: Եթէ ջորի (վաճառուի), նոյնպէս է, իսկ աւանակ՝ դրանց կէսը: Եթէ սպանդանոցում ոչխար վաճառուի, ամէն մէկ ոչխարի համար՝ չորս սեւ ակչէ, եթէ գոմէշ (վաճառուի), երեսուն, եթէ եգ (վաճառուի) տասնհինգ սեւ ակչէ են վերցնում»<sup>15</sup>:

*Կարինը յայտնի էր ոչ միայն իր առեւտրական յարաբերութիւններով, այլեւ Արեւմտեան Հայաստանի արհեստագործութեան խոշորագոյն կենտրոններից մէկն էր: Կարինը վաղուց յայտնի էր իբրեւ հայրենիք «ոսկերչաց, արծաթագործաց, մանաւանդ պղնձագործաց եւ երկաթագործաց, որց կրպակք ընդ մեծի մասին կարգեալ կան ի միամ պողոտայի՝ որ ծածկել է փայտայարկ առաստաղիւք եւ են յաղագս հայոց»<sup>16</sup>:*

*Եւ իրօք, Կարինն իր նշանաւոր հմուտ արհեստաւորներով գայթակղիչ կենտրոն էր դարձել ոչ միայն Թուրքիայի, այլեւ օտարերկրեայ առեւտրականների համար: Քաղաքում գործում էին 18 շուկայ, 1200 կրպակ<sup>17</sup>, որոնցից առաւել նշանաւորներն էին ոսկերիչների 40-45-ի հասնող կրպակները<sup>18</sup>:*

*Կարինի առաւել յայտնի արհեստներից էր զինագործութիւնը: Հայ զինագործներից հռչակուել էին «եօք եղբայրներ» անունով զինագործները, որոնց պատրաստած զէնքերն իրենց որակով չեն գիջում եւրոպական զէնքերին: Պ. Ա. Չիխաչեւը յայտնում է, որ զինագործ եղբայրներից կենդանի մնացած երկուսը, որպէս պատասխան փաշայի ցոյց տուած նոր ատրճանակի, պատրաստում են նրա նմանօրինակը, որն իսկականից կարողանում էին տարբերել միայն մասնագէտները<sup>19</sup>:*

15 Օսմանեան օրէնքները Արեւմտեան Հայաստանում, Երեւան 1964, 77:

16 ԻնձիձՅԱՆ, Կ. Ղ., նշ. աշխ., 71:

17 ПРОСКУРЯНОВ, Я. С., Заметки о Турции, Тифлис 1905, 52.

18 ԶԱՐԸԳ, Ղ., նշ. աշխ., 110:

19 ЧИХАЧЕВ, П. А., История Турции, Л. 1963, 32.

Կարինի զինագործների պատրաստած զենքերը մասնակցել են 1867 թուականի Փարիզի, 1873ի Վիեննայի, 1876ի Ֆիլադելֆիայի ցուցահանդեսներին եւ շահել մրցանակներ, պարգևներ<sup>20</sup>:

Կարինի նահանգի արհեստագործական խոշոր կենտրոններից էին Երզնկան, Բայբուրդը, Քղին, Տէրսիմը, Խնուսը, Դերջանը, Թորթումը, Բայազետը, Կամախը, Սպերը, Կիսկիմը:

Կամախ քաղաքում եւ գաւառակում աշխատում էին 86 առևտրական, 126 արհեստաւոր (որմնադիրներ, հիւան-ատաղձագործներ, դարբիններ, կօշկակարներ, դերձակներ եւ մէկ ոսկերիչ), գործում էր 18 ջրաղաց:

Կամախ քաղաքում, Վերի եւ Վարի Բագառիճներում, Մեծ եւ Փոքր Արմտաններում, Գոմեր, Թեղուտ, Հոռոփիլ, Մելիք շէրիֆ գիւղերում կային 17 նշանաւոր մեծահարուստներ<sup>21</sup>:

Երիզան յայտնի էր իր զարգացած արհեստագործութեամբ: Արհեստներից տարածուած էին ոսկերչութիւնը, արծաթագործութիւնը, բրոնզագործութիւնը, դարբնութիւնը, ասեղնագործութիւնը, պղնձագործութիւնը, մանածագործութիւնը, գինեգործութիւնը, կօշկակարութիւնը, դերձակութիւնը, փականագործութիւնը, քարակոփութիւնը, ժամագործութիւնը, թիթեղագործութիւնը, հացագործութիւնը, ներկարարութիւնը, ջրաղացպանութիւնը, մրսավաճառութիւնը, լուսանկարչութիւնը: Երիզացի վարպետների պատրաստած պղնձեայ թասերը, ափսէները, ինքնատները, տարատեսակ ջրամանները ցուցադրուել են եւրոպական ցուցահանդեսներում:

Քաղաքում գործել են 425 մսավաճառ, 70 առևտրական<sup>22</sup>, 124 պտղավաճառ, 45 նպարավաճառ: Արխիլային նոյն փաստաթղթի վկայութեամբ քաղաքում կար 905 արհեստաւոր<sup>23</sup>: Հայկական երեք՝ Վարի, Կէզիր աղբիւր, Սիւրմէ մահլեսի թաղերում էին տեղաւորուած նրանց արհեստանոցներն ու շուկաները, որոնց մասին Իբն-ի Բատուտան գրում էր. «նրա (Արգինջգնի)

20 ՂԱԶԱՐԵԱՆ, Հ., Արեւմտահայերի սոցիալտնտեսական եւ քաղաքական կացութիւնը 1800-1870, Երևան 1967, 185:

21 ԳԱԹ, նշ. ֆոնդ, ք. 22:

22 ՀԱԱՅ, ֆ. 57, ց. 5, գ. 164, ք. 9, շրջերես:

23 Անդ, ք. 9, շրջերես 10:

բնակիչների մեծագոյն մասը հայ է... կան լաւ կարգաւորուած շուկաներ, որ իր (ֆաղափի) անունով էլ կոչուում են»<sup>24</sup>:

Քաղաքում կար 85-90 մանածագործ ընտանիք, որոնցից ամենայայտնիներից էին Հեփեանները: Մեծահարուստ առեւտրական էր Սարգիս Տէր-Ստեփանեանը<sup>25</sup>: Իր կարողութիւններով աչքի էր ընկնում նաեւ Վարդապետեանը: Փաստաթղթերից մէկը վկայում է, որ երիզացի 23ամեայ Աւետիս Թասլակեանն իր ուժերով պատրաստել է հեծանիւ<sup>26</sup>:

Բրուտներն ու մանածագործներն այնքան էին հմտացել ու կատարելագործել իրենց արհեստը, որ նրանց արհեստանոցները երբեմն անուանում էին գործարաններ:

Թուրքական իշխանութիւնները հայ անեւտրականների նըկատմամբ վարում էին թշնամական քաղաքականութիւն, որպէսզի նրանց գործունէութեան արգելման ճանապարհով պայմաններ ստեղծէին թուրք մրցակիցների համար. զարգացման հնարաւորութիւններից զրկում էին տեղական արդիւնագործութիւնը՝ նըկատելով երկրի յետամնացութեան խորացմանը: Իշխանութիւններն այդպէս վարուեցին լուցկու ձեռնարկութեան հետ միայն այն պատճառով, որ լուցկու տուփի վրայ գրուած էր «Լուծկիֆ Հայաստանի»: Քաղաքի արհեստաւորները միաւորուած էին եղբայրութիւնների կամ էսնաֆութիւնների մէջ:

Կարինում եւ Երզնկայում զբաղւում էին նաեւ կաշուի վերամշակութեամբ, բրդեայ եւ բամբակեայ մետաքսեայ գործուածքների արտադրութեամբ: 1860ին Կարինում գործել են կաշուի վերամշակման 6 ձեռնարկութիւն, որտեղ մշակուել են 10 000 եզան, գոմէշի, 20 000 այծի, ոչխարի մորթիներ: Կարինի արհեստներից նշանաւոր էին նաեւ դերձակութիւնը, մորթեայ վերարկուներ կարողները: Ապխտած մսի (բաստուրմա - Հ. Զ.) մշակութեամբ յայտնի էին Բաստուրմաճեան եղբայրները, ըստ Վ. Փափազեանի, բաստուրմայի պատրաստումը Կարինի մենաշնորհն էր, որտեղ կային «մեծամեծ գործարաններ»<sup>27</sup>: Կարինի աչքի ընկնող ձեռնարկութիւններից էր նաեւ Ծխախոտի վերամշակման արհեստանոցը, որտեղ հիմնականում աշխատում էին կանայք: Զեռ-

24 ԻԲՆ-Ի ԲԱՏՈՒՏԱ, Երեւան 1940, էջ 31:

25 ՀԱԱՅ, ֆ. 476, ց. 1, գ. 283, մ. 2, ք. 76, գ. 283, ք. 64:

26 Անդ, ք. 163:

27 ՓԱՓԱԶԵԱՆ, Վ., Երկեր, հտ. 5, Երեւան 1958, 513:

նարկութիւնը շարունակեց իր գործունէութիւնը մինչեւ 1888<sup>28</sup>: Կարինի նահանգում կային նաեւ օղի, գինի թորող, փայտամշակութեամբ զբաղուող արհեստանոցներ: Տարածուած զբաղմունքներէից էր ջուլհակութիւնը: Կանայք «ման ու փոխ եմ» անում «եւ այս մանածը մէկ ու կէս քամրակի հետ փոխում եւ այսպիսով քամրակը աւելացնում, շալ գործում, տնեցիներին հանդերձ կարում»<sup>29</sup>:

Կարինում կտորեղէնի, մանր ապրանքների վաճառքով զբաղուում էր 500 մարդ, գործում էին 1000 դերձակներ, ոսկերիչներ, պղնձագործներ, զինագործներ. ժամագործներ, որմնադիրներ, հիւսներ<sup>30</sup>: Հիւսնութիւնն ու որմնադրութիւնը զարգացած էին յատկապէս Կարինի գաւառի Օձնի, Կրիչք, Կան գիւղերում:

Բայբուրդի գաւառում զբաղուում էին մրգերի վաճառքով, փայտամշակութեամբ, մետաղագործութեամբ: Քաղաքը գործուն կապերի մէջ էր մտել նաեւ առեւտրաշատ քաղաքներ Չենովայի եւ Վենետիկի հետ: Բացի այդ, Բաբերդը Ճորոխ գետի միջոցով առեւտրական կապի մէջ էր իրենից 120 կմ հեռու գտնուող Բաթում քաղաքի հետ: Չնայած այս կապերին, այնուամենայնիւ, Բաբերդն այնքան էլ մեծ զարգացում չի ապրում եւ մնում է նոյն ասիական տիպի բնակավայրը: Այստեղ մեծ նշանակութիւն ունէր այն հանգամանքը, որ իշխանութիւնները թշնամական վերաբերմունք ունէին առեւտրում գերակշռութիւն ունեցող հայերի, հրեաների, յոյների նկատմամբ եւ յայտնի ու անյայտ ձեւերով փորձում էին սահմանափակել նրանց գործունէութիւնը, որի պատճառով էլ Բաբերդը մնաց նեղ, տեղային բնոյթի առեւտրային մակարդակի վրայ՝ չդառնալով միջազգային տարանցիկ առեւտրի հանգույց:

Եւրոպացի ճանապարհորդներից մէկը հիացմունքով էր խօսում նահանգի ձիերի մասին եւ նշում, որ Կարին նահանգի ձիաբոյծները ոչնչով չեն զիջում եւրոպացիներին. «հայ ձիավաճառք իրենց եւրոպական եղբայրակիցներին քանի մը մէջ վար չեն մնար»<sup>31</sup>:

Թէեւ հայ առեւտրաարդիւնաբերական դասը հմտութեան շնորհիւ կարողանում էր պահպանել իր գոյութիւնը, նուաճուած տնտեսական դիրքերը, սակայն, ելնելով տիրող սոցիալ-տնտեսական՝ հալածական բնոյթ կրող յարաբերութիւններից, ժամանակի

28 Անդ, 193:

29 Տե՛ս Բանբեր Հայաստանի արխիւների (այսուհետ՝ ԲՀԱՅ), 1974, թիւ 3, 88:

30 Ա.ԴՕ, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երևան 1912, 163:

31 ՏՈՒԸԼԷ Ա. - ՓԻՍՕՆ Գ., Ուղեւորութիւնի փոքր Ասիա, Վիեննա 1892, 37:

ընթացքում կորցնում էր ամբողջ կարողութիւնը՝ վերածուելով լաւագոյն դէպքում եւրոպացի վաճառականների ու արդիւնաբերողների կցորդի, սպասարկողի:

Արեւմտահայ իրականութեան մէջ տիրող հեղձուցիչ մթնոլորտը ուրիշ ոչինչ չէր խոստանում, եթէ ոչ Օսմանեան կայսրութեան բիրտ քաղաքականութեան պարզեւած ընչազրկումն ու ստրկացումը: Ութ դնելով իր գոյութեան եօթներորդ հարիւրամեակը՝ Օսմանեան կայսրութիւնը չցուցաբերեց առաջընթացի, կայուն տնտեսական յարաբերութիւնների հաստատման միտում: Յենուելով ազրարային համակարգի խարխուլ հիմքերին, պայքարի դրօշակ դարձնելով ձուլման ու ջարդերի մենաշնորհը՝ փրփրաբաշ նօթյգի սանձերն արձակած հեծեալի պէս արշաւում էր հետ, դէպի անխուսափելի վայրէջք՝ երիվարների սմբակների դոփիւնների մէջ խլացնելով հպատակ ժողովուրդների թէ՛ ազատագրութեան հասնելու ձգտումները եւ թէ՛ գոյութեան իրաւունք հայցող աղաղակները:

Այս ամէնին գումարուեց 1877-1878 թուականների պատերազմից յետոյ կառավարութեան որոշումը, երբ չեղեալ համարելով պատերազմի ժամանակ տրուած ստացականները՝ հրահանգուեց հաւաքել հարկերը: Զէնքի ուժով տանելով հայ գիւղացու ապրուստի վերջին մնացորդները՝ զինուորականներն այս անգամ էլ չէին տալիս անդորրագրեր՝ հիմք պատրաստելով նոր գուփումների համար:

Հայկական նահանգներում սկսուեց սով: Դեսպանական հաշուետուութիւններից մէկում ասուում է, որ կարիինի նահանգի Բայազետի, Ալաշկերտի գաւառներում սովամահ են եղել (նոյն թուականի հոկտեմբերի 1ի տուեալներով) 2000-3000 մարդ<sup>32</sup>:

Սովի ճիրաններում յայտնուած ժողովրդին օգնելու փոխարէն կառավարական հրահանգով սկսուեց հարկերի հաւաքումը նոյն թուականի ձմրանն: Սկսուեց նոր թալան: Բռնազրաւուում էին կահկարասին, անձնական օգտագործման իրերը, անկողինը, հագուստները գրաւ էին դրուում, խլուում էին բարեգործական հիմնարկների՝ սովից փրկուելու նպատակով տրուած գումարները:

Սովը տարածուեց Ալաշկերտում, Բասենում, Բայազետում, Բաբերդում, նահանգի միւս գաւառներում:

«Ա.հռելի տեսարաններ կը ներկայանային հետզհետէ, ամէն սեւի ու տեսակի անձից գետնին վրայ տարածուած էին անշարժ, անզգայ,

մահուան թալուկն իրենց դեմքը կը պատեր եւ միայն մոցա շնչառութեան շնչով կը լսուէր», - Ալաշկերտից գրում էր ականատեսը<sup>33</sup> :

Սովետալներին օգնելու համար 1879ին պատրիարքարանը կազմեց «Սովելոց խնամատար յանձնաժողով»։ Յանձնաժողովը, սակայն, Բ. Դռան թշնամական վերաբերմունքի պատճառով չկարողացաւ կատարել իր պարտականութիւնները։

1880ին նոյնպէս Կարինի նահանգը գտնուում էր սովի ճիւղաններում։ Անտեսելով ժողովրդի ծանր վիճակը՝ կառավարութիւնը որոշեց բանակի կարիքների համար հաւաքել 15.000 թուրքական ֆունտ գումար, որ կազմում էր 337.500 ֆրանկ։ Թէ ինչպիսի դաժանութեամբ էր հաւաքուելու գումարը, պարզ էր, յայտնի էին նաեւ այդ գործողութեան ե՛լ նպատակը, ե՛լ հետապնդած արդիւնքը։

Սուլթանի անձնական քարտուղար Մուստաֆա Նեդիմը վկայում է, որ հարկահաւաքման ժամանակ բռնազրաւում էին տնային իրերը, անգամ թաղիքն էր գրաւ դրուում, կողովը, շերեփը, բահը, լուացքի պարանը<sup>34</sup> :

1880ին «Մշակիմ» ուղղուած հեռագրերից մէկի հեղինակը տեղեկացնում էր, որ «բացառեալ Քարափիլիսէի սովեալներին, Ալաշկերտի քաղաքին մէջ 2600 հոգի՝ օրական պարէնի հետի աստիճանի կարօտ են։ Ձեր յղած գումարն անբաւական է», այնուհետեւ՝ «Բասենու դաշտի բնակիչք ամենեքեան հացի կարօտ են, կ'աղաչեմք զի Ալաշկերտի համար ձեր յղած գումարի կէսն Բասենոյ դաշտին յատկացնէք...»<sup>35</sup> :

Ինչ-որ միջոցառումներ իրականացնում էր նաեւ կառավարութիւնը։ Սակայն նրա հոգացողութիւնն ուղղուած էր միայն մահմետականներին։ Քրիստոնեաները պետական մարմիններից կանխիկ վճարման դէպքում անգամ չէին կարողանում սնունդ գնել։

Նոյն թուականին Ալաշկերտում սովամահ եղան (մէկ ամսում) 100 հայեր, իսկ Ղարաքիլիսայի, Ալաշկերտի գաւառներում կային 3.500 սովեալներ, կարողում ենք մէկ այլ հաղորդագրութեան մէջ<sup>36</sup> : Նահանգի սովեալներին օգնելու առաքելութիւնն իր վրայ վերցրեց արեւելահայութիւնը։ 1880ի տուեալներով սովեալներին է ուղարկուել 50.000 ու, «Մշակից» ստացուել է 30.000 ու, «Հայ կանանց

33 Լէօ, Գրիգոր Արծրունի, հտ. 3, Թիֆլիս 1906, 140:

34 Նեդիմ, Մ., Հայ եղուն, Կահիրէ 1925, 39:

35 Մշակ, 1880, թիւ 5:

36 Անդ, թիւ 107:

կումիսիոնից՝ 10.000, «Փորձ» թերթի խմբագրութիւնից՝ 6.000 ռ.<sup>37</sup>, «Մեղու Հայաստանի» թերթի խմբագրութիւնից՝ 4.000, Պետերբուրգից, Մոսկուայից՝ 60.000 ռ. գումարի օգնութիւն: Լէոյի հաշուամենբրով արեւելահայերը ընդհանուր առմամբ հանգանակել են 100.000 ռ.<sup>38</sup>:

Սովն աւելի սաստկացաւ 1881 թուականին: Է. Լալայեանը ներկայացնում է սրտաճմլիկ մի իրողութիւն, երբ երեխաներին փոխանակում էին սննդի հետ<sup>39</sup>:

Պետական քաղաքականութիւն դարձած հակահայկական գործողութիւններն աւելի էին խորացնում նահանգի հայութեան ունեզրկման ու հարստահարման կացութիւնը: Այստեղ իրենց արտօնեալ դերն էին կատարում թափառական քրդերն ու Հիւսիսային Կովկասից գաղթած մահմետականները:

ԺԹ. դարի երկրորդ կէսին թուրքիան ներքաշուեց դրամատիրական յարաբերութիւնների ոլորտ: Սկսուեց ազգային բուրժուազիայի ձեւաւորման շրջանը: Սակայն, ի տարբերութիւն եւրոպական երկրների նմանատիպ յարաբերութիւնների պատմութեան, կայսրութիւնում այդ գործընթացն ուղղուեց քրիստոնեայ ժողովուրդների առեւտրաարդիւնաբերական դասի դէմ: Պետական այդ քաղաքականութիւնը, սակայն, չծառայեց իր նպատակին: Թուրք բուրժուազիան չձեւաւորուեց որպէս այդպիսին եւ նա, ի հաշիւ հալածանքների տակ ընկած քրիստոնեայ ժողովուրդների, թէեւ որոշ բարձունքի հասաւ, բայց, այնուամենայնիւ, վերածուեց արտասահմանեան կապիտալի կցորդի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՏԻԿԵԱՆ

37 Անդ, քիւ 108:

38 ԼէՕ, Արժրուցի Գրիգոր, հ. 3, Թիֆլիս 1905, 147:

39 ԲՀԱՅ, 1974, քիւ 3, 91:

### Summary

## THE REGION OF KARIN AS COMMERCIAL AND VOCATIONAL CENTER (XIX-XX century)

HOVHANNES ZATIKYAN

For many centuries, the commercial and industrial activity, which was an integral part of the life of the Western Armenians, provided their advantage in relation to the dominant nation, which was contrary to the interests of the sultan's regime in a given period of time. To change the situation, they began secret and open persecutions, to ensure the superiority of the Turkish nation.